ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/13

ք. Երևան «02» հունիսի 2021թ.

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Յավրումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 17050000 (տասնյոթ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում **Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օրը:** Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օրառաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ք. Երևան, Շիրակի 88/1 ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն Հ/Հ 900012000700 ՀՎՀՀ 02697772 Տնօրեն՝ Ա. Գրիգորյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ Լոռու մ., ք. Տաշիր, Լենինի փ. 21ա <<ԱԿԲԱԲԱՆԿ>> ՓԲԸ Հ/Հ 220143330250000 ՀՎՀՀ 06950884 Տնօրեն՝ Ա. Յավրումյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«02» հունիսի 2021թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	31682140	Վերահսկման և ղեկավարման սարքեր	OMNICOMM PROFI 3G /արձանագրիչ/ LLS-5 /վառելիքի մակարդակի ցուցիչ/ OMNICOMM ՌԴ	Կցվում է***	հատ	387500	17050000	44	ք. Երևան, Շիրակի 88/1	44	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը: ***Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, անհրաժեշտության դեպքում՝ գործարանային փաթեթավորման: Տեղափոխումն իրականացնում է մատակարարը:*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772
Տնօրեն Ա. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ
Լոռու մ., ք. Տաշիր, Լենինի փ. 21ա
<<ԱԿԲԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220143330250000
ՀՎՀՀ 06950884
Տնօրեն՝ Ա. Յավրումյան

/ստորագրություն/
Կ.Տ

1. *** Տրանսպորտային միջոցի մշտադիտարկման (մոնիտորինգ) և վառելիքի շարժի/ծախսի վերահսկման համակարգն իր մեջ ներառում է.

- Արձանագրիչ
- Վառելիքի մակարդակի ցուցիչ

Համակարգի նկարագրություն.
Տրանսպորտային միջոցի մշտադիտարկման (մոնիթորինգ) և վառելիքի վերահսկման համակարգը, որը նախատեսվում է տեղադրել ջրցան մեքենաների վրա, հնարավորություն է տալիս իրականացնել մեքենայի աշխատանքի և ծախսի շուրջօրյա խորացված վերահսկողություն և արտատպել դրա հետ կապված ցանկացած հաշվետվություն: Համակարգի շնորհիվ կարողանում ենք ճշգրիտ կերպով իմանալ լիցքավորված վառելիքի քանակը, լիցքավորման ժամը և ստույգ վայրը: Վառելիքի գողոնի դեպքում ճշգրիտ քանակը, ժամը և վայրը: Այն տալիս է ստույգ տեղեկատվություն, թէ որքան վառելիք է ծախսել մեքենան ընթացքի և կանգնած ժամանակ: Բացի վառելիքի հետ կապված գործառույթներից, համակարգը թույլ է տալիս նաև վերահսկողություն իրականացնել մեքենայի կատարած աշխատանքի նկատմամբ: Կոնկրետ ջրցան մեքենաների դեպքում բացի այն, որ երևում է մեքենայի հետագիծը, ինչի միջոցով հասկանալի է դառնում, արդյոք վարորդը շարժվել է նախորոք տրված երթուղիով թէ ոչ, հստակ արտացոլվում է լրացուցիչ սարքավորումների աշխատանքը, դրանց միացված կամ անջատված լինելը: Ծրագրում հստակ երևում է, թէ անցած հետագծի որ հատվածում է միացվել ջրցան սարքը, որքան ժամանակ է այն աշխատել, երբ է անջատվել և որքան վառելիք է ծախսվել լրացուցիչ սարքավորումը միացված ժամանակ: Համակարգը ֆիքսում է, թէ երբ է վարորդը սկսել աշխատանքը և երբ վերջացրել այն: Համակարգը պետք է աշխատի արդեն իսկ գոյություն ունեցող ծրագրային ապահովմամբ, որի միջոցով իրականացվում է աղբատար մեքենաների շուրջորյա վերահսկողությունը: Այսինքն, նույն օգտանունով մուտք գործելով ծրագիր, հնարավոր է լինելու միաժամանակ իրականացնել վերահսկողություն թե աղբատար մեքենաների, թե նոր տեղադրվող մեքենաների կատարած աշխատանքի, լիցքավորված վառելիքի և ծախսի նկատմամբ:

Մատուցվող ծառայությունների անվանում և քանակ.

№ Ո/Ո	Ծառայություններ	Չափման միավոր	Քանակ
1	Տրանսպորտի մոնիտորինգի ծրագրային ապահովման և հավելված մուտք գործելու ապահովում	ՏՄ	1
2	Արձանագրիչի տեղադրում	ծառ.	1
3	Վառելիքի ցուցիչի տեղադրում	ծառ.	1
4	Հնարավոր հավելյալ ծառայություններ		

Արձանագրիչների չափորոշիչներ

Հիմնական առանձնահատկություններ.

Օգտագործվող նավիգացիոն համակարգ	ГЛОНАСС/GPS
Տվյալների փոխանցման ալիքներ	GSM/GPRS
GSM հաճախականության միջակայք	850 / 900 / 1800 / 1900
SIM-քարտերի քանակ	առնվազն 2 հատ
MICRO SD աջակցություն	առկա
Jamming detection գործառույթ	առկա
Աշխատանքային ալիքների քանակ	առնվազն 30
Մուտքային լարում	8-65 В
Ներկառուցված մարտկոց	առկա
Ներկառուցված մարտկոցի տարողություն	առնվազն 1400 мАч
Հիշողության ծավալ	առնվազն 140 000 իրադարձություն
Ներկառուցված արագացման չափիչ	առկա
Աշխատանքային ջերմաստիճանային միջակայք	–40-ից +85 С
Սառը մեկնարկի ժամանակ	Ոչ ավել, քան 35 վրկ.
Տաք մեկնարկի ժամանակ	Ոչ ավել, քան 4 վրկ.

Տրանսպորտային միջոցի վրա տեղադրված տեխնիկայի (կոմունալ և այլ) հետ կապված կողմնակի արտաքին սարքերի տեղեկատվության հանում	առկա
Աշխատանք միաժամանակ նվազագույնը կապի 2 օպերատորների հետ	առկա
Ինտերֆեյս RS-485	առնվազն 2
Ինտերֆեյս RS-232	առկա
Ինտերֆեյս 1-wire	առկա
Ինտերֆեյս CAN	առկա
Ինտերֆեյս USB	առկա
Ձայնային կապի միացման հնարավորություն	առկա
Տագնապի կոճակ/SOS/	առկա
Վառելիքի ծախսի ցուցիչի միացման հնարավորություն	առնվազն 6
Բազմաֆունկցիոնալ մուտքեր տեխնիկայի (կոմունալ և այլ) հետ կապված կողմնակի արտաքին սարքերի միացման համար	Առնվազն 4
Արձանագրիչ սարքի տուփի բացման ցուցիչ	առկա
Տրանսպորտային միջոցի բանալու միացման ցուցիչի համար առանձնացված մուտք	առկա
Տրանսպորտային միջոցի շարժիչի պտույտների ցուցիչ համար առանձնացված մուտք	առկա
Տվյալների փոխանցման ապահովման համար կապի սերվերների միաժամանակյա աջակցություն	առնվազն 3
Երաշխիքային ժամկետ	Առնվազն 3 տարի

Արձանագրիչները պետք է ֆիկսեն յուրաքանչյուր միացված մուտքի նշանակությունները և ավտոմատ կերպով ստանան տվյալներ լրացուցիչ միացված սարքավորումներից՝ ներառյալ վառելիքի մակարդակի տվիչները /ցուցիչները/: Արձանագրիչները պետք է ապահովեն տեղանքի, շարժիչի պտույտների, վառելիքի ծախսի և վարման ոճի/ձևի վերահսկում:
Հնարավոր միացված հիմնական ցուցիչների տեսակները.
Վառելիքի մակարդակի ցուցիչ
Տագնապի կոճակ/SOS
Արձանագրիչը պետք է ունենա մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ստանդարտներին համապատասխան «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» TP TC 020/2011 սերտիֆիկացում:
Արձանագրիչը պետք է լինի նոր (չօգտագործված) և արտադրված մատակարարման օրվանից ոչ ուշ, քան 12 ամիս առաջ:

Վառելիքի մակարդակի ցուցիչի չափորոշիչներ
Վառելիքի մակարդակի ցուցիչները պետք է նախատեսված լինեն վառելիքատար բաքերում առկա նավթամթերքների մակարդակի չափման համար.

Չափիչ մասի երկարություն	առնվազն 700 մմ
Սնուցման լարում	7-75 Վ
Ջերմաչափման միջակայք	-40 – +80°C
Մակարդակի չափման սխալանքի սահման	± 0,5 %
Վառելիքի տեսակը կամ կազմը փոխվելու դեպքում ցուցիչի չափման արժեքների ավտոմատ կարգաբերման/տրամաչափման գործառույթ	առկա
Տեղեկատվության հանման ինտերֆեյս	RS-232, RS-485
Օգտագործվող հզորություն	Ոչ ավել, քան 0,4 Вт
Հոսանքի օգտագործում	Ոչ ավել, քան 40 мА
Ցուցիչի վերնամասի/երևացող հասանելի մասի դիէլեկտրական/էլեկտրականությունից մեկուսացումը	առնվազն 26 кВ/мм
Ցուցիչի վերնամասի /երևացող հասանելի մասի ջերմակայունությունը	առնվազն 0,7 Вт/м*К
Աշխատանքային ջերմաստիճանային միջակայք	– 60 –ից +80°C
Ցուցիչի պաշտպանության աստիճան	IP69k
էլեկտրական ուժից մեկուսացում	առնվազն 2500 Վ

Արտաքին լարերի պաշտպանության միջոց	Կորոզադիմացկուն մետաղական ճկախողովակ
Լարերը ցուցիչին միացնելու միջոց	Չբաժանվող հերմետիկ կապար
Երաշխիքային ժամկետ	Առնվազն 3 տարի

Վառելիքի մակարդակի ցուցիչը պետք է ուենենա մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ստանդարտներին համապատասխան «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն»ТР ТС 020/2011 սերտիֆիկացում:
Բոլոր մատակարարվող սարքավորումները պետք է միացված լինեն տրանսպորտային միջոցների վերահսկման ծրագրային ապահովման հավելվածին:

ԳՆՈՐԴ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 9000120007 00
ՀՎՀՀ 02697772
Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ
Լոռու մ., ք. Տաշիր, Լենինի փ. 21ա
<<ԱԿԲԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220143330250000
ՀՎՀՀ 06950884
Տնօրեն՝ Ա. Յավրումյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 02 » հունիսի 2021թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31682140	Վերահսկման և ղեկավարման սարքեր	-	-	-	-	-	5115000	10230000	10230000	10230000	17050000	17050000	17050000	**17050000**

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772
Տնօրեն Ա. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ
Լոռու մ., ք. Տաշիր, Լենինի փ. 21ա
<<ԱԿԲԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220143330250000
ՀՎՀՀ 06950884
Տնօրեն՝ Ա. Յավրումյան

/ստորագրություն/
Կ.Տ